դակների պատկերագրութեան մէջ. անկասկած հեթանոսական–դիցաբանական ծագում ունին և մեր Մամիկոնեանց շրջանի երեք Ամենափրկիչների վրայ նկատուած ձևակերպութիւնները, ինչպէս և մեր մանրանկարչական արուեստի և ոսկերչական քանդակագործութեան մէջ հաւալուսնի պատկերագրութիւնը խաչելութեան գլխին(1)։ Էջմիածնի մատենադարանի և թանգարանի վարիչ Սենեքերիմ Տէր Յակոբեանը յայտնել է մեզ, որ Արագածի փէշերին, տեղը լաւ չէ յիշում, տեսել է գերեզմանական մի քառանկիւնի կոթող, որի վրայ քանդակուած է եղել արեգակ կենդանու մէջքին։ Այդպիսի կոթողները, որ բաւական բազմաթիւ են մեր մէջ և դեռ ես բանասիրութեան անծանօթ, իրենց ծագմամբ մեծ առնչութիւն են ցոյց տալիս սասանեան միջագետական արուեստի հետ և Դ–Զ. դարերի մնացորդներ են։ Տէր Յակոբեանի տեղեկութեան ստուգութեան դէպքում, պէտք է կարծել, որ դիցաբանական այդ պատկերաւորումն էլ հայ քրիստոնէական արուեստին անցել է գեղարուեստական նոյն հոսանքների հետ, իսկ սրանց, գուցէ, ասորա–բաբելական կամ հեթիթեան դիցաբանութիւնից։ Լուսնի և արեգակի տեղը մեծ է արևելեան ազգերի դիցաբանական պատկերացումների մէջ. «անասնային կերպարանքով կը ներկայացուի աւելի իբրև կինճ, նապաստակ, շուն, խոյ, ցուլ, եղն. ասոնց մէջէն նշանաւորագոյններն են աւելի եղջիւրաւորները՝ իրենց կիսալուսնին նմանութեան պատճառով»(1)։

ԺԶ.

Ամենափրկիչ խաչի պատկերագրութեան աւելի մեծ տարբերութիւններով մի փոփոխակ եղել է Արագածի արևելեան կողմը Աբարանի շրջանի Աստուածընկալ գիւղում. նոյնանուն տաճարը իր գաւթով շինել են Վաչուտեան Քուրդ իշխանը և իր ամուսինը Խորիշահ դուստր Մարծպանա՝ Մամիկոնեան տոհմից։ Տաճարի Աստուածընկալ անունն արդէն մատնանշում է խաչելութեան կամ խաչից իջեցնելու պատկերագրութեամբ մի սրբութեան կամ խաչարձանի գոյութիւնն այդտեղ, թէպէտ այդ մասին չկայ յիշատակութիւն շինութեան սկզբնական արձանագրութեան մէջ, ուր եկեղեցին «սբ կաթողիկէ» է կոչուած։ Հաւանական է, որ այդպիսի խաչարձան կանգնել են աւելի ուշ, քան ՈՂԳ = 1244 թուականը, երբ տաճարն է շինուած։ Կարծում ենք, ունինք այդպիսի մի խաչարձանի կտորը՝ «Թ. Զ» = 1251 թուականից. տաճարի հարաւային կողմը հին, բազիլիկ եկեղեցու մնացորդի խորանում ընկած է մի խաչքարի բեկոր, նուրբ քանդակներով և ելնդաւոր գեղեցիկ գրերով. աջի և աղաւնու պատկերների վրայ «աջ ա̃յ» և «հոգի ա̃յ» վերտառութեամբ. սրանց տակը խաչակնքող մի անդրի, որ Քրիստոսն է։ Աւելի ցած հորիզոնական ուղղութեամբ մի տող արձանագրութիւն, շարունակութիւնը վերից վար, այսպէս.

. . . . . այրին Ղազարայ եւ Վ.
ահմ
. . . .

Հաւանօրէն արձանագրութիւնը շրջանակ էր կազմում բուն խաչին, որ խաչելութիւնն էր պատկերաւորում հնագոյն աւանդութեան համաձայն։

Այսպէս ուշ ժամանակում այդ երևոյթն, այսինքն խաչով խաչելութիւնն արտայայտուած, անյարիր ենթադրութիւն չըպէտք է երևայ, քանի որ ունինք փաստական մնացորդ հէնց նոյն Արագածոտն գաւառի Աշտարակ աւանում, Կարմրաւոր Աստուածածին եկեղեցուց բարձր, դէպի Մողնու տանող պողոտայից աջ գտնուած՝ գե–

---

(1) *Տե՛ս մեր «Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից» յօդուածը «Տաթեւ»ի Զ. գրքի մէջ* 238-239. *նոյնը եւ առանձին գրքոյկով.* 1930. *Հալէպ.* 46-47։ *Նաեւ Ձեռ. Էջմ.* N 75 *նժ. խաչից իջեցնելու մանրանկարի գլխին, Պարսամ ծաղկողի ձեռքով,* 1508 *թուին։*

(1) *Հանդ. Ամս.* 1920. 270. *յօդուած Մատիկեանի՝ «Արեւը եւ լուսինը»։*